

վիճակի մէջ է խնդիրը. պատերազմի տուգանք մի միայն եւ այն ո՛չ աւելի քան 3,000.000 օսմ. լ. քաւական կը համարին տէրութիւններէն շատերը: Ըստ մեր կարծեաց՝ աւելին պահանջելու իրաւունք ունի յաղթող կողմը, քայց ո՛չ յաղթուողէն, այլ յաղթութեան պատճառ երդողներէն:

Առաւորիս: Փրանց Եօզէֆ կայսեր գտած սիրալիր ընդունելութիւնն ի Պետերբուրգ մեծ նշան կը համարուի՝ այս երկու տէրութեանց իրարու մտտեանալուն, զոր ի սրտէ կը քաղծանք: Բայց շատ մեծ նշանակութիւն ունին թէ երկու կայսերաց խօսած ճառերն, եւ թէ մանաւանդ արտաքին գործոց երկու պաշտօնանաներու (Մորաւիէվի եւ Գոլուխովսկիի) հեռագիրները Բալկանեան երեք տէրութեանց, որոնք միաքան վար դրին գէնքերը եւ դադրեցուցին պատերազմական պատրաստութիւնները: Հարկաւ այս հեռագիրը խոստում մըն ալ կը պարունակէր, որ խոյս տուաւ հրապարակի լուսէն, քայց շուտ թէ ուշ “չիք ինչ ծածուկ որ ոչ յայտնեսցի”, վճիռն իրականութիւն կը գտնէ: — Աւստրիական երեսփոխանաց ժողովը ժամանակէ մ’ի վեր այնպէս տեսարաններ կը ներկայացընէ, որ վերջապէս պիտի լուծուի. վառն զի գերմանական մասը՝ շատ դժգոհ այն կարգադրութենէն, որով Բաղնին՝ ուրիշ լեզուներու ալ գործածութիւնը կ’արտօմէր՝ պաշտօնական շրջանակներու մէջ ի Բոհեմիա, աղմկով, ժխորով արգելք կ’ըլլայ ժողովին գործերուն: Բայց ծանրախոհ լրագիրները շատ իրաւամբ դիտել կու տան, որ այս կարգադրութիւնը արդարաւիճեան պարտք է, զոր պէտք են ուրիշ տէրութիւններ ալ իրր օրինակ առնուլ. մանաւանդ որ Աւստրիա զուտ գերմանական տէրութիւն չէ, այլ շատ մի մանր սազութիւններէ կազմուած կայսրութիւն մի:

Սպանիա: Կուքս միոցուեցաւ առ ժամանակ մի, քայց կոխները կը շարու-

նակուն, եւ Միացեալ Նահանգներն սկսան յայտնապէս զգալի ընել իրենց ծայնը, թէ ալ քաւական համարելու է Սպանիա թափուած արիւնը եւ հաւած է ինքնավարութեան ժամանակը: Իսկ սպանիացիք պարլամենտի մէջ զիրար կ’ապտակակոծեն եւ մենամարտութեան փորձեր կը կատարեն:

Գաղղիա: Իւր անտարբերութենէն սթափեցաւ քիչ մը, երբ 200ի չափ անմոռներ զոհ տուաւ: Այս ցաւալի արկածին առթիւ՝ ցաւակցական հեռագիրներու խումբ մը տղաց: Եթէ “քաղաքակրթական,, ցաւակցութիւն մըն է այս, մեծ մարդասիրութեան ապացոյց չէ, իսկ եթէ իրական եւ սրտազին ցաւակցութիւն է, ի՞նչ համեմատութիւն կայ երկու հայրիւրի եւ երկու հայրիւր հազարի մէջ, որ սակայն անտարբեր թողուց շատերը:



ԲՈՎԱՆԳԱԳՈՒԹԻՒՆ

ՌԻՍՈՒՐՆԱԿԱՆ

ՊԵՏՄԱՆԱՆ — Պատմական տեղեկութիւնք Եղիսաբեթուպոլսոյ Հայոց վաղեմի վարչութեան վրայ. 161:

ԹՂԵԿՅՈՒԹԻՒՆ — Կովկասեան թղթակցութիւն. 168:

ԳՐԱԳԻՏՈՒՄ — Եօզուած եւ զիրք գրելու արուեստ. 173:

ՀՆԱԳՐԱԿԱՆ — Անկարկ մը հայ հնագրութեան վրայ. 177:

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ — Փաւստոս Բիւզանդացի. 183:

ԼԵԶՈՒԹԻՒՆԱԿԱՆ — Հաւաքածոյ թրանսիլւանիոյ Հայոց գաւառական քանոնք. 186:

ԱՅԼԵԼԵԼԸ

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ — 1. Գրուկները (վարց) զիրք. 187:

ԱԶԳԱՅՈՒ ԹԵՐԹԵՐԻ ԺԱՆԿԵՓՈՒՆԸ — 1. Պրոֆ.

Մառ: — 2. Հայ ընթերցատուն Հմիւնիոյ, հաստատեալ 1869ին: — 3. Դանգասներու սկզբնաւորութիւնը: — 4. Ռուս տէրութեան պաշտպանութիւնը: — 5. Եւրոպայի հայ ուսանողական միութիւն: — 6. Նուխատուութիւններ: — 7.

Պատուաբեր գաղթականներ: — 8. “Հայ դարվիականները,, — 9. “Գրականական եւ պատմական հանգէտ,, 187:

ԳԵՂԵԿԱԿԱՆ ՑԵՍՈՒԹԻՒՆ 191:



ՀՐԱՏԱՐԱՆԻԶ ԵՒ ՊԵՏԱՄԱՆԱՆՈՒ ԽՍՐԱՅԻՐ

Հ. ԲԱՓԱՅԷԼ Վ. ՊԱՐՈՆԶ

ՎԻԵՆՆԱ, ՄԻԻԹԱՐԲԵՆ ԵՂԱՐԱՆ.